զոր մատուցին նամակաւ Պատրիարքն և փոխանորդն Հայոց, քննութիւնն 'ի ձեռն պաշտօնէին, զգիրս դատաւորին և այլազգեացն Երուսաղէմի, զհրովարտակն Սէլիմայ Արքային՝ և զնենգութիւն ազգին Յունաց, որոց առեալ զպաշտօնեայս 'ի Թիւրք օղլուէն՝ զորոյ զգլուխն հատեալ էին, որ յայնժամ կուսակալէր 'ի Դամասկոս, անիրաւութեամբ և զրկանօք յափշտակեալ են զեկեղեցիս և զվանօրայս Հայոց. ապա 'ի մէջ բերէ զգիրս դատարանի և ըզհրովարտակս նախնեաց իւրոց, զի ըստ զօրութեան նոցին տիրել Հայոց սեփհական վիճակի իւրեանց, եկեղեցեաց, վանօրէից, ուխտատեղեաց՝ և ամենայն ստացուածոց որպէս յերեկն և յեռանդն. արգելու և խափանէ զհակառակութիւնս Յունաց, զի մի անհնազանդ գտեալ ասէ՝ հրամանաց իմոց բռնասցին 'ի վերայ հպատակացս, եւ առիթ լիցին տարադէպ ցրուելոյ նոցա այսր և անդր, և եթէ խարէյութեամբ հրովարտակ եւս հանեալ մատուսցեն, մի երբէք յարդ ընծայեսցի սնամ, և այսպիսի դատք և խընդիրք՝ որք միանգամ օրինօք Շէրիի լուծեալ լիցեն, միւսանգամ մի՛ լիցի ունկնդրութիւն. ապա պատուիրէ զգոյշ լինել չգործել ինչ հակառակ Կայսերական հրամանին, զի իւրաքանչիւր ազգ կացցեն 'ի տեղիս իւրեանց առանց այլայլելոյ զսահմանս միմեանց՝ որպէս աւանդեալ ունին 'ի նախնեաց անտի։ Ի \ ՃԷմսպիլ Էվվել ամսոյ՝ \•Վ• տուեալ յէտիրնէ քաղաքի։ Եւ եղեւ այս մատ յաւուրս Խաչ վերացի յամի Տեառն (1659) եւ 'ի թուին Հայոց ՌՃԸ։ Առեալ յայնժամ Եղիազարու զհրովարտակն՝ եկն յԵրուսաղէմ եւ 'ի բաց վարեալ զՅոյնս, անդրէն 'դրաւեաց զվանս Սուրբ Յակոբայ 'ի ձեռաց նոցին։

Եղիազար վարդապետ նախ քան զմեկնիլ իւր 'ի Կոստանդինուպօլսոյ, ետ հաստատել հրովարտակաւ զփոխանորդութիւն իւր, որոյ բովանդակութիւնն է. «Աստուածատուր եպիսկոպոսն, որ Կայսերական հրովարտակաւ Պատրիարք է յԵրուսաղէմ, եւ գլխաւորք մայրաքաղաքիս վեց եկեղեցեաց և ամենայն երեսփոխանք Հայոց մատուցին դիր աղաչանաց 'ի բարձրագոյն Դուռն, զի յԵրուսաղէմ, որ 'ի սկզբանէ անտի ուխտատեղի է ամենայն քրիստոնէից, եւ ըստ տրամադրութեան Արքունի հրովարտա-